ՋԵՅՄՍ ԲՐԱՅՍԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1876-1914թթ.

ԲԵՆԻԱՄԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

XX դարի սկիզբը հայ ժողովրդի քաղաքական պատմության ամենածանր պահերից մեկն էր: Օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի բնաջնջման իր ծրագրի իրականացմանը, որը դեռևս Աբդուլ Համիդի օրոք սկսված հայկական ջարդերի քաղաքականության շարունակությունն ու նաև՝ գագաթնակետն էր: Մեծ եղեռնին զոհ գնացին 1.5 միլիոն հայեր, հարյուր հազարավորները հարկադրված լքեցին իրենց բնօրրանը և սփռվեցին աշխարհով մեկ:

Հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին, երբ քաղաքական թատերաբեմում գործող մեծ տերությունների պաշտոնական ղեկավար շրջանակները գրեթե ոչինչ չարեցին կանխելու կամ, գոնե, թեթևացնելու նրա տառապանքները, տարբեր պետությունների առաջադեմ հասարակական ուժերն ու գործիչներն իրենց ձայնը բարձրացրին ընդդեմ այդ ոճրագործության: Ընդհանրապես, դեռ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, սկսած XIX դարի վերջին քառորդից, Օսմանյան կայսրությունում հայերի վիճակը բարվոքելու նպատակով եվրոպական տարբեր երկրներում ինչպես անհատ գործիչների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների կողմից ձևավորվեց հայասիրական շարժումը: Այս կազմակերպություններն իրենց գործունեությունը շարունակեցին թե՛ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, թե՛ պատերազմի ավարտից հետո՝ իրենց գործունեությունը ծավալելով թե՛ քաղաքական և թե՛ մարդասիրական օգնության ոլորտներում:

Ցավոք, հայասիրական շարժումը չկարողացավ շոշափելի արդյունքների հասնել հատկապես քաղաքական դաշտում, և այդ հանգամանքն առիթ տվեց, որ հայասիրական շարժումները հաճախ նույնացվեն տվյալ պետությունների վարած՝ հայերի համար անբարենպաստ քաղաքականությանը և այդ նկատառումներով լուրջ քննադատության արժանանան:

Սակայն սխալ կլիներ անուշադրության մատնել այն հսկայական ներդրումը, որ բերել էին միջազգային հայասիրական շարժումն ու նրա քարոզչությունը, և եթե հայասերնե-

որը չկարողացան ազդել իրենց կառավարությունների վրա, որպեսզի նրանք որդեգրեն հայանպաստ քաղաքականություն, ապա այդ ամենը ոչ թե վկայում է նրանց մեղսակցության մասին, այլ ցույց է տալիս նրանց հարաբերական անզորությունն այդ հարցում:[1]

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նրանից հետո, մինչև Լոզանի կոնֆերանսը ներառյալ ընկած ժամանակահատվածում, միջազգային հայասիրական շարժման մեջ որոշակիորեն արժևորվում է Մեծ Բրիտանիայում ծավալված հայասիրական շարժումը: Այդ շարժման նախակարապետներից էր Ջեյմս Բրայսը: Նա ծնվել է 1838թ. մայիսի 10-ին, Հյուսիսային Իռլանդիայի Բելֆաստ քաղաքում, որտեղից էլ նրա ընտանիքը 1846թ. տեղափոխվում է Գլազգո, ուր Բրայսն ընդունվում է տեղի համալսարանը: Համալսարանն ավարտելուց հետո, 1857թ. նա շարունակում է իր ուսումն Օքսֆորդի Թրինիտի քոլեջում, ուսանում իրավունքի և պատմության դասընթացը:[2]

Բրայսն ուներ հետաքրքրությունների լայն շրջանակ, որում իր ուրույն տեղն էր զբաղեցնում սպորտը, մասնավորապես՝ ալպինիզմը: Հենց դա էլ պատճառ հանդիսացավ բիբլիական Արարատի գագաթը բարձրանալու նպատակով նրա ճանապարհորդությանը դեպի Հայաստան: Ճանապարհորդությունը Բրայսն սկսեց 1876թ. ուշ ամռանը, իր օքսֆորդյան ընկերոջ՝ Էնիս Մաքքեյի հետ: Նույն թվականի սեպտեմբերի 9-ին նրանք արդեն Երևանում էին, և ամսի 11-ին սկսվեց վերելքը: Վերելքի վերջին մասը Բրայսը հաղթահարեց միայնակ և սեպտեմբերի 12-ին նա Արարատի գագաթին էր:[3]

Ճանապարհորդությունը կարևոր նշանակություն ունեցավ Բրայսի հետագա քաղաքական կողմնորոշումների համար, մասնավորապես՝ Փոքրից Կ. Պոլիս Մև Ծովի երկայնքով վերադարձին Բրայսն ուղղակիորեն շփվեց թուրքական ապաշնորհ կառավարման հետևանքների հետ, որոնք նրան որոշակի եզրահանգումների առիթ էին տալիս: Բրայսի վերադարձից հետո ստեղծվել էր մի իրավիճակ, երբ իրական էր դառնում Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմի հեռանկարը, և ենթադրվում էր, որ Անգլիան, Դիզրայելիի գլխավորությամբ, կնախաձեռնի սուլթանի պաշտպանությունը: Բրայսը ներգրավվեց կառավարության արտաքին քաղաքականության ընդդիմության մեջ և հենց այդ շրջանից էլ նա սկսեց ակտիվորեն զբաղվել նաև Հայկական հարցով: Բրայսն ընդգրկվեց «Արևելյան հարցերի ընկերակցության» հինգի ենթահանձնաժողովում, որի կազմում էին նաև Վիլիամ Մորիսը, Ջ. Գրինը և Սթոփֆորդ Բրուկը: Ընկերակցությունը ստեղծվել էր վարչապետի՝ թուրքամետ ծրագրերի դեմ պայքարելու համար: Բրայսն ենթահանձնաժողովի ամենաակտիվ անդամն էր, և նաև նրա ջանքերով 1876թ. դեկտեմբերի 8-ին St. James սրահում տեղի ունեցավ ընկերակցության կոնֆերանսը, որտեղ ելույթ ունեցավ նաև Գլադստոնը՝ հայտարարելով, որ ազգը չի հանդուրժի պատերազմի մեջ նետվել Թուրքիայի օգտին: Փաստորեն, դրանք առաջին քայլերն էին այն քաղաքական արշավի, որն ավարտվեց լիբերալ կուսակցության փայլուն հաջողությամբ 1880թ. գարնանային ընտրություններում:[4]

Բրայսի՝ Հայկական հարցին առնչման առաջին քայլը Լոնդոնում 1877թ. «Անդրկովկաս և Արարատ» գրքի հրատարակումն էր: Գիրքը հիմնականում ճանապարհորդական նոթերի շարադրանք էր, սակայն Բրայսը որոշակի տեղ էր հատկացրել հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմությա-

նը՝ այն սկսելով Հերոդոտոսի նկարագրություններից մինչև իր ժամանակները: Միաժամանակ Բրայսը ներկայացնում էր Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ծանր դրությունը և կատարում մի շարք հետաքրքիր վերլուծություններ, որոնք կարևոր են ինչպես Բրայսի, այնպես էլ, ընդհանրապես, հայասիրական շարժման մեջ ընդգրկված մարդկանց մտածելակերպը հասկանալու համար: Բրայսը նշում է, որ հայերը չեն ապստամբում իրենց ճնշողների դեմ, քանի որ նրանք անզեն են, սակավաթիվ, և հայերի մեջ ցրված ապրում են թաթարներ, քրդեր, օսմանցիներ, սակայն գլխավոր պատճառն այն է, որ ստրկության դարերը կոտրել են ազգի ոգին, չկան առաջնորդներ, միասնական գործողության միջոցներ ու նաև՝ չկա եվրոպական տերությունների աջակցության կամ համակրության հեռանկարը: Եվ չնայած այս պատճառները նվազեցրել են նրանց՝ անկախության կամ ինքնակառավարման հնարավորությունները, սակայն ինքնակառավարման ուզածդ այլ ձև, ըստ Բրայսի, կլիներ ավելի լավ, քան այն բռնապետությունը, որի պատճառով հայերը տառապում են: Բրայսը նշում է, որ Թուրքահայաստանի համար որևէ տիպի անկախության այլընտրանքը Ռուսաստանին հարելն է, և վերջինս արդեն օգտագործում է իր դիրքը՝ պահանջելով հովանավորության որոշակի ձև ողջ հայ ժողովրդի նկատմամբ: Ավելի լավ է ցարը, քան սուլթանը, սա է Ռուսաստանի հայ հպատակների և Թուրքիայի իշխանության ներքո ապրողների կողմնորոշումը, սակայն Բրայսն եզրակացնում է, որ ավելի լավ է տեղական ինքնակառավարման որևէ ձև, քան ցարը կամ սուլթանը:[5]

Նույն գրքի 10-րդ գլխում՝ վերնագրված «Փոթիից Կոստանդնուպոլիս Սև Ծովով», Բրայսը նկարագրում է Օսմանյան կայսրությունում տիրող կառավարման դաժան հետևանքները: Նա գրում է, որ բոլոր այդ ճնշումներն ու թշվառությունները հավասարապես ընկած են մահմեդական և քրիստոնյա բնակչության վրա, սակայն երկրի ներսում, որտեղ չկան հյուպատոսներ, քրիստոնյաներն, անկասկած, ավելի վատ վիճակում են՝ լինելով անզեն և առանց որևէ օրինական փոխհատուցման միջոցների: Հետաքրքիր է, որ Բրայսը հավանական է համարում քրիստոնյաների ընդհանուր կոտորածը: Նշելով, որ քրիստոնյաների հանդեպ մահմեդականների ատելության զգացումն այժմ ավելի ուժեղ է, քան Ղրիմի պատերազմի ժամանակ, Բրայսը հետաքրքիր եզրահանգում է անում, թե դրա պատճառներից մեկն այն ադոտ զգացումն է, որ Օսմանյան տերությունը մահանում է և քրիստոնյա բնակչությունը, որի թվաքանակը չի նվազում այնքան արագ, ինչքան մահմեդականներինը, թաքուն սպասում է իր ազատագրմանը:[6]

Գրքի վերջին գլխում, որը վերնագրված է «Որոշ քաղաքական խորհրդածություններ», Բրայսը, նշելով, որ չի գրել իր գիրքը որևէ քաղաքական նպատակներով, այնուամենայնիվ կատարում է որոշ եզրահանգումներ: Նշելով, որ ինքը նախատրամադրված է ընդդեմ Ռուսաստանի, որին նա մանկուց սովոր է նայել որպես ազատության թշնամու, որը ճնշում է Լեհաստանին և հնարավորություն է տվել Ավստրիային՝ ջախջախել Հունգարիային, Բրայսը եզրակացնում է, որ Ռուսաստանը եվրոպական մնացած տերությունների համեմատ շատ ավելի քիչ շարժառիթ ունի նոր անեքսիաներ իրականացնելու, քանի որ արդեն զբաղեցնում է մեծ տարածք, իսկ անեքսիան պահանջում է փողի մշտական վատնում, մինչդեռ Ռուսաստանի պարտքն արդեն բավական մեծ է: Ըստ Բրայսի՝ չնայած Ռուսաստանը չկարողացավ խուսափել պատերազմից (խոսքը 1877-

1878թթ. ռուս-թուրքական պատերազմի մասին է), սակայն հենց ռուսական շահերը պահանջում են անեքսիաների հարցում չափավոր քաղաքականություն, քանի որ նոր տարածքների ավելացումը կստիպի ռուսական արդեն չափից դուրս մեծ կայսրությանը ստանձնել պատասխանատվություններ, որոնց համար երկիրը պատրաստ չէ, և որոնց ներքո համակարգը կարող է կոտրվել: Նշելով, որ երեխայի մտածելակերպ է քարտեզի ամենամեծ մասը զբաղեցնող երկիրը համարել ամենահզորը, Բրայսն ասում է, որ շատ անգլիացիների մոտ առկա է նման մտածելակերպ Ռուսաստանի հարցում, և նրա տիրապետությունները Եվրոպայի մնացած մասում նրա մասին շատ սխալ կարծիք են ձևավորել: Բրայսը ցույց է տալիս իր անբարյացակամ վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ՝ գրելով, որ ռուսներն իրենց ողջ բազմակողմանիությամբ հանդերձ, դեռևս լիովին քաղաքակրթված չեն: Երկիրն ունի ներքին լուրջ խնդիրներ՝ հողի հարց, աշխատանքի հարց, կրոնական հարց, սահմանադրական հարց: Ի վերջո, նա անառարկելի է համարում հետևյալ փաստերը՝ ա. Ռուսաստանը շատ ավելի թույլ է հարձակման համար, քան կարծում են, բ. հետագա նվաճումները միայն կվնասեն և կթուլացնեն նրան:[7]

Խոսելով Օսմանյան կայսրության մասին՝ Բրայսը գրում է, որ թուրքերը նույն տարածքում բնակվող տարբեր ազգերից միայն մեկն են, և երկիրը, որը նրանք տիրապետում են, իրենցը չէ: Ներկա պատերազմում նրանք նույնքան զավթիչներ են, որքան ռուսները, և նրանց վտարումը կլինի «տարածքի ազատագրում»: Եվ դա ոչ այն պատճառով, որ նրանք եկել են որպես նվաճողներ, այլ որովհետև՝ մնացել են որպես նվաճող ռազմական կաստա, որը մերժում է հավասար քաղաքացիական իրավունքներ տալ իր հպատակներին և ճնշում է նրանց հնարավոր բոլոր միջոցներով: Նրանք, փաստորեն, դեռևս թշնամական բանակ են, որը ճամբար է դրել անզեն հպատակների շրջանում, ովքեր ատում են նրան, և այս ամենի արդյունքում հենց որ օտար բանակները մտնում են Բուլղարիա կամ Հայաստան, հպատակ բնակչությունը նրանց դիմավորում է որպես ազատարարի, իսկ երբ այդ բանակները նահանջում են, հպատակների վրա է թափվում թուրքական զինվորականության անմարդկային վրիժառությունը: Հայաստանում թույլ և անմեղ մարդիկ, ովքեր երբեք չեն ծրագրել որևէ ապստամբություն, ոչնչացվում են իրենց այրվող գյուղերում:

Խիստ հետաքրքիր է նաև Բրայսի կարծիքը թուրքական կառավարություն մասին: Այն, ըստ Բրայսի, երկար ժամանակ է, ինչ հիվանդ է և շատ տարիներ կարող է մի կերպ քարշ գալ, բայց չկա որևէ կասկած, որ հիվանդությունն անբուժելի է: Փաստ է, որ թուրքական կայսրությունը վաղուց մասերի բաժանված կլիներ, եթե չլիներ եվրոպական տերությունների հաշվենկատությունը:

Խոսելով հնարավոր ելքերի մասին՝ Բրայսը դրանցից մեկն է համարում Ռուսաստանի կողմից անեքսիան, որն, անշուշտ, բարիք կլիներ հայերի համար իրենց ներկա վիճակի համեմատությամբ, բայց որը ոչինչ լավ բան չի խոստանում ո՛չ անեքսիայի ենթարկված նահանգների, ո՛չ էլ Ռուսաստանի համար: Որպես հնարավոր ելք Բրայսը քննարկում է կախյալ, բայց, գործնականում, անկախ հայկական պետության հիմնումը, նման նրան, ինչն իրականացվեց Լիբանանում, սակայն նա այդ տարբերակը քիչ հավանական է համարում, քանի որ քրդերը և այլ մահմեդականներ դժվարություններ կստեղծեն: Բացի այդ՝ կասկածելի է, թե որքանով են դարեր

շարունակ բռնապետության տակ եղած հայերն ունակ ինքնակառավարման և ինքնապաշտպանության: Ինքը՝ Ռուսաստանն էլ կդիմադրի այդպիսի իշխանության ստեղծմանը, քանզի դրա գոյությունը կզրկի Ռուսաստանին այն ազդեցությունից, որն ունի նա Ասիայում՝ որպես Էջմիածնի պատրիարքի և, ընդհանրապես, հայ ազգի պաշտպանի:

Ըստ Բրայսի, հաշվի առնելով նման խոչընդոտները, հայրենասեր հայերը ձգտում են բարելավել թուրքական կառավարման համակարգը՝ քրիստոնյաներին ընձեռելով հավասար իրավունքներ: Խոսելով բարեփոխումների իրականացման հնարավորության մասին՝ նա առաջարկում է տեղական կառավարիչներին զուգահեռ նշանակել օգնականներ՝ ի դեմս եվրոպական հյուպատոսների կամ այլ արժանահավատ անձանց և, ի լրումն դրա, ստեղծել կենտրոնական հանձնաժողովով, որն ի վիճակի կլինի մշտական և արդյունավետ ճնշում գործադրել Բ. Դռան վրա: Բրայսը նշում է, որ այդպիսի բարեփոխումների արդյունքում հավանական է անձի և սեփականության անվտանգության որոշակի աստիճան ապահովել:

Հետաքրքիր է Բրայսի միտքն այն մասին, որ այդպիսի ապահովության ստեղծումը կունենա ևս մեկ օգտակար ներգործություն, որը հազվադեպ է քննարկվում, այն է՝ այդ տարածքների բնակեցումը եվրոպական երկրների վերաբնակիչներով: Նույնիսկ Կ. Պոլսի մերձակա շրջաններում առկա են բերրի հողերի զգալի տարածություններ, որոնք անմշակ են, և պետք է ողջունել նմանօրինակ բնակեցումը:

Խոսելով քրիստանական շահերի մասին Արևելքի կարգավորման խնդրում՝ Բրայսը նշում է, որ շատերի մոտ վախ կա, որ Հայաստանի և Կ. Պոլսի անցումը Ռուսաստանին կարող է վնասել քրիստանական շահերին Սուեզի ջրանցքի տարածքում և Հնդկաստանում: Բրայսը փաստարկներ է բերում այդ տեսակետի դեմ նշելով, որ Ռուսաստանը չի կարող վտանգ ստեղծել ո՛չ Սուեզի ջրանցքի տարածքում, ո՛չ էլ Հնդկաստանի համար: Ցնորք համարելով այն տեսակետը, որ գրավելով Էրզրումը ռուսները կշարժվեն դեպի Բաղդադ, Դամասկոս և այնտեղից էլ՝ Պարսից ծոցով հնարավորություն կունենան սպառնալ Հնդկաստանին, Բրայսն այնուամենայնիվ նշում է, որ Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի կամ որևէ այլ նշանակալի տարածքի ձեռք բերումը Ասիայում կամ Եվրոպայում լրջորեն կվնասի այն հեղինակությանը, որ Անգլիան ունի Լևանտի երկրներում, նրա ազդեցությանը և բարոյական կշռին, և դա դժբախտություն կլինի հենց այդ երկրների համար, քանի որ ռուսական պետական համակարգը չափից դուրս ռեպրեսիվ է և քարացած, ռուս պաշտոնյաները չափից դուրս անկիրթ են, կաշառակեր, շատ են անհանգստացած իրենց սեփական եկեղեցու շահերով: Ավելի լավ է ցարը, ասում են Թուրքիայի քրիստոնյա հպատակները միաձայն, քան ներկայիս չարիքների շարունակումը, բայց ավելի լավ է, եթե հնարավոր է, բարեփոխված Թուրքիան՝ խթանված «արևմտյան հեծյալների» կողմից: Բրայսը եզրակացնում է, որ այս երկրներում դեռևս մեծ է Անգլիայի հեղինակությունը, վերջինիս վերաբերում են հիացմունքի և հուսախաբության խառնուրդով. հիացմունքի՝ որպես ազատության երաշխավորի, հուսախաբության և զարմանքի՝ որպես թուրքական ճնշման ներկայիս հովանավորողի և ընկերոջ: Ըստ Բրայսի, Անգլիայի միջամտությունը հպատակ ժողովուրդների օգտին կողջունվի ավելի մեծ գոհունակությամբ, քան Ռուսաստանի միջամտությունը:[8]

Այս գրքի հրատարակությունից հետո Բրայսը շարունակեց ակտիվորեն զբաղվել հայկական խնդրով: Նույն՝ 1877թ. Բրայսը Լոնդոնի "Royal Institution" դահլիճում հանդես եկավ Հայաստանի մասին հրապարակային դասախոսությամբ, որը նրա առաջին հայասիրական ելույթն էր: Դա կարևոր դեր խաղաց հայ գաղութի ականավոր ներկայացուցիչների հետ մերձեցման համար: Արդյունքում՝ 1878թ. մարտի 7-ին Բրայսի տանը տեղի ունեցավ անգլիացի հայասերների և Լոնդոնի ու Մանչեստրի հայ ազգայինների հանդիպում, որի ընթացքում որոշվեց լորդ Կարնարվոյի նախագահությամբ և Բրայսի քարտուղարությամբ ստեղծել «Անգլո-հայկական ընկերակցությունը» ("Anglo-Armenian Association"): Փաստորեն "Anglo-Armenian Association"-ը դարձավ Անգլիայում ստեղծված առաջին հայասիրական կազմակերպությունը:[9]

1878թ. Բրայսը հանդիպեց Մինաս Չերազի հետ և խնդրեց մանրամասն տեղեկություններ տալ Հայաստանի ու հայ ժողովրդի մասին: Կարճ ժամանակ անց՝ 1878թ. հունիսին, "Fortnightly Review" պարբերականում լույս տեսավ նրա հոդվածը, որում, մասնավորապես, նշվում էր. «Հայկական գավառները կարելի է նոր մեծ նահանգի վերածել, որը Սև ծով ելք կունենա Տրապիզոնով և Կիրասոնով, որը կլինի եվրոպական պետությունների հավանությամբ ընտրված, կամ, նույնիսկ, եվրոպացի կառավարչի կառավարման տակ: Եթե ցանկանում ենք ռուսական առաջխաղացման առաջն առնել, հայ ազգի զարգացումն ամենալավ և, թերևս, միակ տևական միջոցն է: Հայկական պահանջների գոհացումը ռուսական միջամտության պատրվակները կջնջի»:[10] 1878թ. հուլիսի 1-ին Բրայսը Վեսթմինսթերյան աբբայության Երուսաղեմի պալատում, ավագ քահանա Սթենլիի նախագահությամբ կազմակերպեց հավաքույթ, որի ժամանակ ելույթներ ունեցան լորդ Շաֆթեսբերին, լորդ Կարնարվոն և սըր Ջոն Քենուեյը:[11]

Նշենք, որ այս շրջանում հայ անգլիական շփումներում կարևոր էր նաև հայ համայնքի ներկայացուցիչների դերը՝ կապված Բեռլինի կոնֆերանսի և Խրիմյանի պատվիրակության՝ Անգլիա կատարած այցի հետ: Նրանք ևս ստեղծեցին հայ-անգլիական մերձեցմանը միտված մի շարք կազմակերպություններ:[12]

1880թ. Բրայսն ընտրվեց համայնքների պալատի անդամ, ուր կրկին շարունակեց իր հայանպաստ գործունեությունը: Պատահական չէ, որ իր առաջին իսկ պառլամենտական նիստում (1880թ. հուլիսի 23) նա ներկայացրեց Հայկական հարցը՝ հիշեցնելով հայերի դժգոհությունները, նշելով, որ նրանք անկախություն չեն ուզում, այլ միայն՝ պաշտպանություն սպանություններից և կողոպուտներից: Իր ելույթը նա եզրափակեց շեշտելով հայ ազգի հիանալի որակները, ներկայացնելով այնպիսի մարդկանց գործունեությունը, ինչպիսիք էին Լորիս Մելիքովը և Նուբար փաշան:[13]

Հետագայում, 1880-ական թթ., Բրայսը շարունակեց իր այդ հայանպաստ գործունեությունը: Մասնավորապես՝ հայտնի է նրա նամակագրական կապը հայ տարբեր գործիչների, այդ թվում՝ Ներսես Վարժապետյան պատրիարքի հետ:[14]

Հայասիրական շարժման նոր վերելքը Մեծ Բրիտանիայում առնչվում է 1894-96թթ.՝ համիդյան սարսափելի կոտորածների ժամանակաշրջանին: Այս դեպքում ևս Բրայսն իրադարձությունների կենտրոնում էր: Անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասն անդրադառնալ նրա այս շրջանի գործունեությանը: Ա. Նասիպյանն իր «Բրիտանիա և Հայկա-

կան հարցը» (Պեյրութ 1994թ.) և Տ. Տիգրանյանը մեր արդեն հիշատակած «Անգլիան և հայերը» աշխատության մեջ նշում են, որ 1893թ. Բրայսը հիմնեց "Anglo-Armenian Association"-ը (Անգլո-հայկական ընկերակցություն), որի նախագահ դարձավ պառլամենտի անդամ Ֆ. Ստիվենսոնը:[15] Սակայն վերոհիշյալ "The Case for the Armenians" հրատարակությունը, որի նախաբանը գրել է ինքը՝ Ստիվենսոնը, մեզ այլ բան է հուշում: Այդտեղ բերվում է "Daily News" թերթի 1893թ. մայիսի 5-ի համարում տպագրված հոդվածը, որտեղ նշվում էր, որ Կ. Պոլսում Մեծ Վեզիրի և Սայիդ փաշայի կողմից արված հայտարարությունների կապակցությամբ, ըստ որոնց Անգլո-հայկական ընկերակցությունը հեղափոխական կազմակերպություն է, ընկերակցությունը վերահրատարակել է երկու տարի առաջ հրապարակված պաշտոնական հայտարարությունը, որ իր անդամները տոկ ցանկանում են իրականացված տեսնել վարչական և իրավական այն բարեռորոգումները, որոնք երաշխավորված են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով:[16] Հետևաբար Անգլո-հայկական ընկերակցությունը գոյություն է ունեցել առնվազն սկսած 1891թ.: Նույն հրատարակության մեջ բերված է հաղորդագրություն 1893թ., մայիսի 12-ին Ջեյմս Բրայսի մեծարանքի հավաքույթի մասին, որին բացի ընկերակցության անդամներից ներկա էին նաև նշանավոր այլ անձինք: Մասնավորապես՝ ընկերակցության նախագահ Ֆ. Ստիվենսոնն իր ելույթում նշում է, որ հավաքույթի նպատակն է նշել Հայկական հարցին Բրայսի մատուցած ծառայությունները, որը եղել է ընկերակցության առաջին նախագահը, սակայն ստիպված էր հրաժարվել նախագահի իր պաշտոնից, երբ նա դարձավ ներկա կառավարության անդամ:[17] Այս փաստերը հավաստում են, որ ընկերակցությունը հիմնվել է 1893թ. առաջ և առաջին նախագահն է եղել ինքը՝ Բրայսը:

Այս շրջանում ստեղծվեցին նաև այլ հայասիրական կազմակերպություններ: 1895թ. ստեղծվեց "Scotland-Armenian Association"-ը (Շոտլանդա-հայկական ընկերակցություն), որի ղեկավարն էր Արկայլի Դուքսը: 1896թ. կազմակերպվեց "International Association of the Friends of Armenia"-ն (Հայաստանի բարեկամների միջազգային ընկերակցություն): Այս կազմակերպության նախագահն էր Ռոչեստրի եպիսկոպոսը, պատվարժան քարտուղարությունը էր Լեդի Հենրի Սոմերսեթը: 1897թ. Լոնդոնում հիմնադրվեց "Friends of Armenia" (Հայաստանի բարեկամներ) միությունը, որի նախագահն էր Լեդի Ֆրեդերիկ Գավնդիշը: Այն 1900թ. փետրվարից սկսեց հրատարակել եռամսյա "Friend of Armenia" (Հայաստանի բարեկամ) պաշտոնաթերթը:[18] Այս շրջանում ստեղծվեց նաև "Grovenor House" ընկերակցությունը, որի ստեղծմանը աջակցություն ցուցաբերեց Սոլսբերիի կառավարությունը և որի նախագահն էր Վեսթմինսթրի դուքսը:[19]

Այս տարիներին թե՛ Բրայսի և թե՛ այլոց կողմից հրապարակվեցին մի շարք աշխատություններ և հոդվածներ Հայկական հարցի և 1894-1896թթ. հայկական կոտորածների մասին:[20] Բրիտանական հասարակությունը, բրիտանական տարբեր կազմակերպություններ հայերին նյութական օգնություն ցույց տալու համար ձեռնամուխ եղան նաև հանգանակությունների կազմակերպմանը: Դրանցից, թերևս, առաջինը բրիտանական «Բարեկամների կրոնական ընկերության հայկական առաքելությունն» էր (Armenian Mission of Religious Society of Friends), որը հիմնադրվել էր Կ. Պոլսում դեռևս 1881թ.: 1889թ. հայկական միսիայի աշխատակից Աննա Բարջիսի նախաձեռնությամբ հիմնադրվեցին հայկական կիրակնօրյա

դպրոց, արհեստագործական ուսումնարան և ցերեկային դպրոց: Հանգանակությամբ էր զբաղվում նաև «Հայաստանի Բարեկամներ» միությունը, որը միայն 1899թ. հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հանգանակեց Մանչեստրից՝ 172, Էդինբուրգից՝ 60, Բեյսլիից՝ 60, Լիվերպուլից՝ 217 ֆունտ ստեռլինգ: Ընդհանրապես 1897-1908թթ. հավաքվեց մոտ 60000 ֆունտ ստեռլինգ, որն օգտագործվեց 1894-1896թթ. կոտորածներից տուժածներին օգնելու համար:[21]

Խոսելով այս շրջանում Բրայսի հայանպաստ գործունեության մասին, մասնավորապես, հարկ է նշել "Times"-ում 1896թ. հունվարի 22-ի նրա հոդվածի մասին, ուր նա կրկին անդրադառնում է հայերին թուրքերի ողորմածությանը հանձնելու համար Բրիտանիայի պատասխանատվության խնդրին:[22] Նույն լրագրում 1896թ. հոկտեմբերի 2-ին տպագրվեց նրա մեկ այլ հոդվածը, որում նա, մասնավորապես, գրում էր, որ 100000 քրիստոնյաներ են սպանվել Օսմանյան կայսրությունում, և այդ կոտորածներն իրականացվել են երկրի իշխանության կանխամտածված ծրագրով, որպես վաղուց կազմված՝ հայ քրիստոնյաների բնաջնջման պլանի մի մաս: Մեղադրելով եվրոպական տերություններին անտարբերության մեջ՝ Բրայսն այս հոդվածում երեք ելք էր առաջարկում.

1. վերջ տալ թուրքական կայսրությանը և բաժանել նրա տարածքները, որը կլիներ լավագույն լուծումը, քանի որ թուրքն անուղղելի է.

2. ներկայացնել բարեփոխումների ամբողջական ծրագիր, որոնք, մասնավորապես, կկիրառվեն այն նահանգներում, որտեղ հայ բնակչության թիվն ամենամեծն է:

Սակայն Բրայսն այս երկու լուծումների իրականացումը ռեալ չի համարում մի շարք պատճառներով և որպես երրորդ տարբերակ առաջարկում է զահընկեց անել Աբդուլ Համիդին: Այս քայլի առավելությունն, ըստ նրա, այն է, որ դա կարելի է իրականացնել արագ և հեշտությամբ, քանի որ մահմեդականները նրան չեն սիրում, միաժամանակ՝ այն չի առաջացնի ոչ մի տարածքային խնդիր:[23]

1896թ. հունվարի 21-ին Բրայսն, Արերդինում ելույթ ունենալով իր ընտրողների առաջ, անդրադարձավ նաև Հայկական հարցին՝ նշելով, որ 1894թ. սկսված և շարունակվող կոտորածներին զոհ են գնացել տասնյակ հազարավոր, իսկ որոշ հաշվարկներով ավելի քան 150000 քրիստոնյաներ: Ներկա վիճակի համար Բրիտանիան պատասխանատու է ավելի, քան որևէ այլ տերություն, քանի որ Բրիտանիան էր, որ փրկեց թուրքական կառավարությանը Ղրիմի պատերազմի ժամանակ և Բրիտանիան էր, որ 1878թ. զրկեց հայերին Ռուսաստանի խոստացած պաշտպանությունից:

Ելույթի վերջում Բրայսը նշում է, որ Բրիտանիան պետք է ակտիվ քայլեր ձեռնարկի Թուրքիային զսպելու ուղղությամբ, իսկ եթե կառավարությունն այդ ուղղությամբ քայլեր չձեռնարկի, կմնա մեկ հնարավոր ելք՝ հրավիրել Ռուսաստանին, որպեսզի նա վերականգնի խաղաղությունը հայկական նահանգներում որպես Եվրոպայի մանդատ ունեցող պետություն:[24]

1896թ. Բրայսը Լոնդոնում չորրորդ անգամ վերահրատարակեց իր «Անդրկովկաս և Արարատ» աշխատությունը՝ նրան ավելացնելով «Հայկական հարցի քսան տարիները» գլուխը: Նշելով, որ քսան տարի է անցել գրքի առաջին հրատարակությունից և այդ տարիների ընթացքում հայ քրիստոնյաներն ավելի մեծ տառապանքներ են կրել, քան նրանց նախնի-

ները նախորդ ութ դարերի ընթացքում, Բրայսն իրավիճակը քննարկում է երեք տեսանկյունից՝ դիվանագիտական (որը վերաբերում է Ռուսաստանի, Անգլիայի և այլ մեծ տերությունների վարքագծին), վարչական (որը վերաբերում է սուլթանի և նրա պաշտոնյաների գործողություններին) և ազգային (որը նկարագրում է իրենց՝ հայերի զգացմունքներն ու վարքագիծը):[25] Ներկայացնելով Բեռլինի պայմանագիրը և 1878թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական կոնվենցիան Կիպրոսի վերաբերյալ, Բրայսը նշում է, որ Բրիտանիան աններելի սխալ կատարեց 1878թ.՝ ևս մեկ անգամ իրեն պատասխանատու դարձնելով բարբարոսական տերության գոյության շարունակման համար: Շարադրելով 1878թ. հետո տեղի ունեցած իրադարձությունները (1879թ. Մեծ Բրիտանիայի կողմից Ասիական Թուրքիայում ռազմական հյուպատոսների նշանակում, 1880թ. հունիսի 11-ի՝ մեծ տերությունների դեսպանների նոտան Բ. Դոանը, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի լիակատար և անմիջապես իրականացման պահանջով, նույն թվականի սեպտեմբերի 7-ի կոլեկտիվ նոտան)՝ Բրայսը գրում է, որ 1880թ. իշխանության եկած Գլադստոնի կառավարությունը քայլեր ձեռնարկեց Բեռլինի պայմանագրի մի շարք մասերի իրականացման ուղղությամբ, սակայն 1883թ. Բիսմարկը տեղեկացրեց, որ Գերմանիան հոգ չի տանում այդ խնդրի կապակցությամբ, և դա վերջ տվեց այն հույսին, որ եվրոպական համաձայնությունը կստիպի թուրքերին իրականացնել բարեռորոգումներ. դրան խանգարեց նաև 1882թ. Եգիպտոսի բռնազավթումը Մեծ Բրիտանիայի կողմից: Այնուամենայնիվ, ըստ Բրայսի, հաջորդող բրիտանական կառավարությունները մինչև 1894թ. շարունակեցին ցուցումներ տալ դեսպանին՝ թուրքական կառավարության ուշադրությունը հրավիրել ճնշումների մի շարք դեպքերի վրա: Խոսելով Ռուսաստանի վարած քաղաքականության մասին, նա գրում է, որ վերջինս մինչև 1883թ. ազնվորեն աջակցում էր Անգլիային՝ Բեռլինում խոստացված բարեռորոգումների իրականացման համար, սակայն դրանից հետո փոփոխություններ կատարվեցին հայերի նկատմամբ նրա վերաբերմունքում: Ռուսաստանն ավելի շատ սկսեց անհանգստանալ իր բոլոր հպատակներին ռուսականացնելու և քրիստոնյաներին ռուսական եկեղեցու շարքերը քերելու հարցում, ուստի նրա վերաբերմունքը հայերի հանդեպ դարձավ ավելի քիչ բարեկամական:[26]

Խոսելով վարչական ասպեկտի մասին՝ Բրայսը նշում է, որ սուլթան Աբդուլ Համիդը հասկանում է, որ Թուրքիայի նյութական հզորությունը թուլացել է և հույս ունի վերականգնել այն կրոնական նկրտումների գործադրմամբ: Նա ամեն ինչ անում է ակտիվացնելու իր մահմեդական հպատակների անհանդուրժողականությունն ու կրոնական կրքերը, և ոչ մի սուլթան, սկսած Սելիմից, չի եղել քրիստոնյաների, հատկապես հայերի, այդքան հետևողական թշնամին:

Անդրադառնալով երրորդ՝ ազգային ասպեկտին, Բրայսը ներկայացնում է հայերի դրությունը Օսմանյան կայսրությունում: Նա նշում է, որ Բեռլինի կոնգրեսը հույսեր արթնացրեց հայերի շրջանում և ակտիվացրեց նրանց ազգային կյանքը, որին նպաստեց նաև արևմուտքում կրթություն ստացած երիտասարդների թվի աճը և երկրի ներսում ամերիկյան միսիոներների կատարած աշխատանքը արևմտյան արժեքները տարածելու գործում: Ըստ Բրայսի, 1880-ականների կեսից ռեֆորմների իրականացման հարցում հուսախաբությունը հանգեցրեց նրան, որ Օսմանյան կայսրությունից դուրս՝ Աթենքում, Ժնևում, Թիֆլիսում ստեղծվեցին հայկական

հեղափոխական կոմիտեներ, սակայն, ինչպես գրում է Բրայսը, երկրի ներսում բնակչության առավել գիտակից մասը դեմ էր հեղափոխական գործունեությանը և ապստամբություն բարձրացնելուն, քանի որ հաջողության որևէ հույս չկար, և դրան կարող էր հետևել համընդհանուր կոտորածը: Անգլիայում և Ամերիկայում հայերի բարեկամները ևս համոզում էին չդիմել ֆիզիկական ուժի՝ նշելով, որ դա, ի վերջո, կրերի ազգացի կոտորածի և ավերածության: Միաժամանակ սուլթանը որպես առաջնորդող սկզբունք ընդունեց մոտ տաս տարի առաջ արտահայտված «հայկական հարցից ազատվելու ճանապարհը հայերից ազատվելու մեջ է» կարգախոսը. այդ պարագայում կարևոր էր 1891թ. քրդական անկանոն հեծելազորի հիմնումը: Այնուհետև Բրայսն անդրադառնում է 1894թ. Սասունի դեպքերին, այդտեղ ուղարկված հանձնաժողովի գործունեությանը, 1895թ. մայիսի 11-ի բարեփոխումների ծրագրին և նշում, որ չնայած նույն տարվա հոկտեմբերի 17-ին վերջինս ձևափոխումներից հետո ընդունվեց, սակայն մինչև 1896թ. հոկտեմբերը ոչինչ չի կատարվել այն իրականացնելու համար: Բրայսը նաև ժամանակագրական կարգով թվարկում է 1895թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում սկսված և այնուհետև տարբեր վայրերում շարունակված հայկական ջարդեր:[27]

Գրքի վերջում Բրայսն եզրակացնում է, որ Անգլիայի ավանդական՝ ընդդեմ Ռուսաստանի՝ Թուրքիային աջակցելու, քաղաքականությունը (որն սկսվեց Պիտի կողմից 1791թ., հանգեցրեց 1853թ. Ղրիմի պատերազմին, աջակցություն ստացավ Լորդ Բիքոնսֆիլդի կողմից՝ հանգեցնելով 1877թ. պատերազմին և Սան-Ստեֆանոյի պայմանագրի փոխարինմանը Բեռլինի պայմանագրով) լիակատար ձախողում է կրել, քանի որ Թուրքիան այժմ շրջվել է Ռուսաստանի կողմը Անգլիայի սպառնալիքների դեմ աջակցություն ստանալու համար: Նշելով, որ 100-200 հազար քրիստոնյաներ են սպանվել 1894-1896թթ. կոտորածների ժամանակ՝ Բրայսը դրանց հիմնական պատճառ համարում է դաժան բռնապետության և ֆանատիկ հասարակ ժողովրդի ետևում կանգնած եվրոպական տերությունների ճակատագրական գործողությունները կամ անգործությունը: Ըստ նրա, նախքան Բեռլինի պայմանագիրը սուլթանը չուներ որևէ հատուկ թշնամանք հայերի հանդեպ, ոչ էլ հայ ազգն ուներ որևէ քաղաքական ձգտումներ: Նրանց պաշտպանության համար արված քայլերն էին, որ դարձրին նրանց կասկածի և ատելության առարկա և նրանց մեջ ազատագրման հույս արթնացրին: Եթե չլիներ Բեռլինի պայմանագիրը և անգլո-թուրքական համաձայնագիրը, հայերն, անկասկած, կշարունակվեին ճնշումների ենթարկվել, ինչպես դարեր շարունակ, բայց նրանք կխուսափեին կրակի, կոտորածի և սովի մրրիկից, որ նրանց վրա իջավ 1895թ.: Սա է, ինչ նրանց բերեց եվրոպական պաշտպանությունը: Եվ Բրայսը եզրակացնում է, որ արևելքի քրիստոնյաների համար ավելի լավ կլիներ, եթե որևէ դիվանագետ երբեք որևէ արձանագրություն չստորագրեր կամ ճառ չգրեր նրանց օգտին: Սակայն ինչ էլ բերի ապագան, անցյալն անցյալ է և մի օր պետք է կանգնի սերունդների դատավճռի առջև:[28]

Ինչպես նշեցինք՝ 1894-96թթ. ընթացքում որոշակի քայլեր ձեռնարկվեցին նաև կոտորածներից փրկված հայերին օգնություն ուղարկելու համար. այստեղ ևս առկա էր Բրայսի և Անգլո-հայկական ընկերակցության դերը: Ընկերակցությունը մի շարք ժողովներ ունեցավ Ֆ. Ստիվենսոնի նախագահությամբ և դիմեց քրիստոնական կառավարությանը՝ հորդո-

ելով ստիպել օսմանյան իշխանություններին բարենորոգումներ իրականացնել Թուրքահայաստանի կառավարման գործում: Անատոլիայում անտուններին և աղքատներին օգնելու նպատակով կազմակերպվեց «Հայկական օգնության ֆոնդ»-ը: Ֆոնդի պրեզիդենտն էր Արկայլի դուքսը, նախագահը՝ Ֆ. Ստիվենսոնը: Անդամներ էին՝ Յորքի արքեպիսկոպոսը, լորդ Էդմոնդ Ֆիցմորիսը, պառլամենտի անդամներ Ջեյմս Բրայսը, Ջոն Քենիվեյը, Չարլզ Շվանը:[29]

Բրայսը 1894-96թթ. իրադարձություններից հետո էլ շարունակեց զբաղվել Հայկական հարցով: 1904թ. նոյեմբերի 2-ին Բոստոնի "Vendom" պանդոկում հայերի կողմից ճաշկերույթ տրվեց ի պատիվ նրա, որին մասնակցում էին նաև ամերիկյան հայանպաստ շարժման ներկայացուցիչներ: Բրայսը հանդես եկավ ելույթով, որում նշեց, որ 1878թ. հետո թուրքերը ոչինչ չեն արել հայերի հանդեպ խժդժությունները կասեցնելու համար, և սահավոր ջարդերն իրենց գագաթնակետին են հասել 1895-96թթ., և այդ ջարդերը խնամքով ծրագրված և հրահանգված էին Կ. Պոլսի թուրքական իշխանությունների կողմից: Նշելով, որ անցյալ ամռանը մեկ այլ ապստամբություն է տեղի ունեցել Սասունի և Մուշի մեջ՝ Բրայսն, այնուամենայնիվ նշում է, որ ինքը դա ճիշտ չի համարում. նման շարժումները կհանգեցնեն ավելի մեծ ջարդերի: Ելույթի վերջում նա նշում է, որ ցանկալի է, որ ԱՄՆ-ն իր ազդեցությունը գործ դներ ի նպաստ հայ ժողովրդի:

Նման մի միջոցառում էլ ամերիկահայերը կազմակերպեցին 1906թ. փետրվարի 23-ին, որտեղ ևս Բրայսը հանդես եկավ ելույթով:[30]

Նշենք, որ Բրայսն ակտիվորեն ընդգրկված էր բրիտանական քաղաքական կյանքում՝ զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ: Դեռևս 1892թ. նա դարձավ Գլադստոնի կառավարությունում իռլանդական «Հոմ Ռուլի» նախագիծը պատրաստող հանձնաժողովի անդամ, 1894թ. Լորդ Ռոզբերիի կառավարությունում զբաղեցրեց առևտրի նախարարի պաշտոնը: 1905թ. նոյեմբերին ընդհանուր ընտրություններում լիբերալ կուսակցության հաղթանակից հետո Բրայսը սըր Հենրի Քեմփբել Բաններմանի կառավարությունում ստանձնեց Իռլանդիայի գլխավոր նախարարի պաշտոնը, իսկ 1907թ. նշանակվեց Մեծ Բրիտանիայի դեսպան Վաշինգտոնում (փետրվարի 21 1907թ.-ապրիլ 24 1913թ.): Սակայն դեսպան եղած ժամանակ էլ Բրայսը հետևում էր Հայկական հարցի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին:

Ամփոփելով Ջեյմս Բրայսի հայանպաստ գործունեությունը 1876-1914թթ. կարող ենք ասել, որ նա հանդիսացավ Մեծ Բրիտանիայում հայանպաստ շարժման սկզբնավորողը և ամենաակտիվ գործիչը: Միաժամանակ պետք է նշել, որ Բրայսի հայանպաստ գործունեությունը շարունակվեց նաև 1914թ. հետո, որի բարձրակետն է հանդիսանում "The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916" փաստաթղթերի ժողովածուի հրատարակումը 1916թ.:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Գասպարյան Ե. Հայասիրական շարժումը Ֆրանսիայում առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան,1999թ., էջ 3:
[2] Բրայսի մանրամասն կենսագրությունը տես՝ H. A. L. Fisher, James Bryce, vol 2, New York, 1927, pp. 313-324 և «Համբավաբեր», Թիֆլիս, 1916թ. հոկտեմբերի 2, թիվ 40, էջ 1253-1255:
[3] H. A. L. Fisher, ibid., vol. 1, New York, 1927, pp. 157-166.
[4] Ibid., pp. 166-167.
[5] James Bryce, Transcaucasia and Ararat, London, 1877, pp. 297-325.
[6] James Bryce, ibid., pp.. 378-382.
[7] Ibid., pp. 390-399.
[8] James Bryce, ibid., pp. 399-417.
[9] Յովհ. Տէր Պետրոսյան. Ճեյմս Պրայս և հայերը, Գահիրե, 1975թ., էջ 73-77:
[10] Նույն տեղում էջ 79-80:
[11] The Case for the Armenians, London, 1893, p. 37.
[12] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Տիգրանյան Տ. Անգլիան և հայերը, Երևան, 1994թ., էջ 19 և Յովհ. Տէր Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 77-78:
[13] H. A. L. Fisher, ibid., vol 1, pp. 182-187.
[14] Այդ շրջանում նրա գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս Յովհ. Տէր Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 99-119:
[15] Նասիպյան Ա. Բրիտանիա և Հայկական հարցը, Պեյրութ, 1994թ., էջ 47 և Տիգրանյան Տ.. նշվ. աշխ., էջ 29:
[16] The Case for the Armenians, p. 5.
[17] Ibid., pp. 33-34.
[18] Նասիպյան Ա. նշվ. աշխ., էջ 47-48:
[19] Армянский Вопрос, Энциклопедия, Ереван, 1991, стр. 97.
[20] Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Киракосян А., Великобритания и Армянский Вопрос (90-е годы XIX века), Ереван, 1990, стр. 162-164, 172-179, 188-196.
[21] Киракосян А. նշվ. աշխ., էջ 162-164.
[22] H. A. L. Fisher, ibid., vol 1, pp. 300-302.
[23] Ibid.
[24] Armenia, Information (Armenia) Bureau, London, 1896, pp. 58-59.
[25] James Bryce, ibid., fourth revised edition, London, 1896, pp. 445-447.
[26] Ibid., pp. 450-457.
[27] James Bryce, ibid., fourth revised edition, pp. 462-499.
[28] Ibid., pp. 500-526.
[29] Krikorian M., Armenians in the Service of the Ottoman Empire, 1860-1908, London, 1977, p. 9.
[30] Յովհ. Տէր Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 131-139:

Резюме

Проармянская деятельность Джеймса Брайса в 1876-1914гг.

Бениамин Погосян

Начиная с последней четверти XIX века в некоторых странах Европы, в ответ на антиармянскую политику, проводимую в Османской Империи, стало формироваться проармянское движение. Основоположником такого движения в Великобритании стал Джеймс Брайс.

Впервые повыва в Армении в 1876г., Брайс посвятил себя проармянской деятельности. В 1877г. вышла в свет его книга "Закавказье и Арарат", в которой автор выдвигал необходимость проведения реформ в армян-

ских вилаетах. 7-го марта 1878г. он основал "Англо-армянскую ассоциацию", которая стала первой проармянской организацией в Англии.

Будучи избранным в парламент в 1880г. он и здесь продолжил свою активную деятельность по Армянскому вопросу. Он находился в центре проармянского движения в Великобритании также во время армянских погромов в 1894-1896гг..

Занимая ряд государственных должностей (в 1894г. - министр торговли, в 1905г. - главный министр Ирландии), Брайс в 1907г. стал послом Великобритании в Вашингтоне, где продолжал следить за событиями, происходившими вокруг Армянского вопроса.

Оценивая его проармянскую деятельность в течение 1876-1914гг., можно сказать, что Брайс являлся самым активным деятелем проармянского движения в Великобритании в этот период.

Summary

The Proarmenian Activity of James Bryce in 1876-1914

Beniamin Poghosyan

From the beginning of the last quarter of XIX century a proarmenian movement was formed in a number of European countries in response to antiarmenian policy conducted in the Ottoman Empire.

One of the founders of the proarmenian movement in Great Britain was James Bryce.

Visiting Armenia in 1876 for the first time, he devoted himself to the proarmenian activity. In 1877 he published the book "Transcaucasia and Ararat" in which he emphasized the necessity of realizing reforms in the Armenian vilayets.

On 7 March 1878, he established the "Anglo-Armenian Association" which became the first proarmenian organization in England.

In 1894 James Bryce worked as Minister of Trade and in 1905 as Minister of Ireland. In 1907 he was appointed as ambassador to Washington D. C.; and even in this capacity he continued to be interested in the Armenian question.

Summarizing his proarmenian activity in 1876-1914 James Bryce can be considered to be the most active supporter of the Armenian question in Great Britain.